

Պատկերահանս Նաբոլի հրաւիրուած ըլլալով՝ Գանձուն խորանը ջրաներկ նկարելու համար, այնչափ նախառա- կան մահացուցումն կրեց՝ ի զանազան անձանց՝ որ հրաժարեցաւ և ի Հռովմ փախաւ. բայց յետոյ լսելով որ այս պատճառաւ իր կինը և որդիքը բանտ դրուեր են, դարձաւ իր գործը աւարտելու. և հօն մեռաւ վաթսնամեայ յամին 1641: Կ'ըսուի թէ թունաւո- րուած ըլլայ և զժբաղդաբար ճշմար- տանման կ'երեի այս:

Արդ ինչ պատճառի տալու է այդ պիսի բարբարոսական հալածանք: Ամենայն մատենագիրք համաձայն են՝ որ այսմ պատճառ եղան միայն իր բարձր հանճարն և բարի սիրտն, պար- զութիւնն և համեստութիւնն: Ուս- տի յաջորդ սերունդք, որոնք շատ անգամ աւելի լաւ կը ճանչնան քան քնախորդա՝ անձանց ձիրքերը, առա- ջնակարգ պատկերահանաց մէջ կը դասեն զՏոմէնիքինոյ, յետ Ռափայելի, Գորրէճիոյի և Դիյիանոսի:

ՅԱԿՈՒ ՕՖԷՆՊԱԽ ԵՐԱՍԻՇՏ

Շատ օր չէ որ մեռաւ վարժապետն Յակոբ Օֆէնպախ. ի Բարիզ իրեն չբեղ յուղարկաւորութիւն ըրին: Օֆէնպախ նորանշան և մտադրութեան արժանի կեանք մ'ունեցաւ, թէ իրեն բնու- թեամբը և թէ պարագային համար յորում իր հանճարը զարգացաւ. — կեանք մրցանաց և խեղճութեանց, խառն յաղթանակաց և անհաւատալի բաղդից հետ: Ծնեալ ի Գոյնիա յամին 1819 և եկեալ ի Բարիզ ի 1842, առաջին արգելքը՝ զոր կրցաւ ի բաց թօ- թափել՝ ազգութեանն էր. ինքը գերմա- նացի՝ զաղղիացիներէն աւելի գաղղիա- ցի եղաւ:

Պարահանդիսից մէջ վին զարնող, արուեստականաց գլուխ, կատակեր, գութեան թատրոնաց մէջ զլխաւոր վարիչ և պարահանդիսից ուղղիչ, Օֆէնպախ երեք առաջին տարիներն անձկութեամբ և նեղութեամբ ապրե- ցաւ ի Բարիզ, մինչև այն ատեն երբ իրեն մեծ բաղդ համարելով, ամիսը 83 ֆլանքով մտաւ իբրև նուագածու Օ- լիւրա Գոմիք թատրոնին երաժշտաց մէջ: — Իր ստոյգ առաջին թատրոնա- կան աշխատութիւնը Ալգուլը եղաւ՝ Դուր տ'Ովերները փոքր թատրոնին հա-

մար, և ոչ եթէ կրկին Կոյրքը (Les Deux Aveugles), ինչպէս որ կը պնդեն գրեթէ բոլոր իր կենսագրութիւնը գրողները: Օֆէնպախ գրեց Կրկին Կոյրքը երբոր չինեց Պուֆ Բարիզիէն. ներուն թատրոնը, բացման համար, որ եղաւ ի 5 մայիս 1855. այս գործս իր առջի նուագաւոր խաղիկը եղաւ, որուն յաջորդեցին Որփէոս (Orphée), Գեղե- ցիկն Հելենէ (La Belle Hélène) և ուրիշ շատեր, որոնք արագապէս իրեն համ- բաւը հուշակեցին իբրև գլուարթ և աշ- խոյժ երգայարդար:

Օֆէնպախի յաջողութեանց և ար- ծախից փառաւոր ժամանակը մինչև կայսրութեան անկումը տևեց, և տասն ուհինգ տարի երաժշտական խեղկա- տակ յարասութեանց շարունակ գե- ղադէտ (caleidoscope) մ'եղաւ, մեծ մայրաքաղաքին ամեն թեթև թատրո- նաց վրայ: — Յամին 1867, Համաշ- խարհական հանդիսին ժամանակ, եր- բոր կայսրութիւնն իրեն վերջին ծայրն էր, հանդիսացաւ առաջին անգամ իր Կրաւն Տիւրէն տը Կէրոլլոյայնները՝ վարիչէյէ թատրոնին մէջ. մեծ էր բոլոր Բարիզու հետաքրքրութիւնը և անհամ- բերութիւնը. կայսրն, կայսրուհին, Արքու-

Նականաց հետ մեկտեղ հօն էին, ինչպէս նաև Մէդէրիք իշխանուհին. Կէնէրալ Պուռնի և Շնայտէրի յաջողութիւնը ահագին եղաւ. մարտիականներ, նուիրակներ, սինկղիստոսներ, արքունի սե. նեկապեաններ ծափահարելով ձեռնոցնին կը պատռէին : Ժայռը՝ որուն վրայ Օֆէնպախեան նաւը նաւակոծեցաւ, արդէն բաւական խլիլած Նաբոլէօնեանց ելլելէն ետքը, Կէնէի թատրոնը եղաւ, զոր ուղղելու ձեռնարկութիւնն իր վրայ առաւ Օֆէնպախ, թշուառաւ նալով բողբոլմին :

Վերջին կործանման վայրկեանը Օֆէնպախ մինչև ցլետին փողը հատոյց, բայց գրեթէ 50,000 եկամուտէն հազիւ իրեն Ամերիկայ երթալու համար դրամ մնաց, յորում ամերիկեան ներշնչմանց նիւթ եղաւ և բաղդը շտկեց տոլլարներով : Օֆէնպախ ճամբորդութեանը վրայ հատոր մը գրեց, անուանեալ Լուրք երաժշտի ունեք՝ ի ձանաւ պարնորդութեան :

Վերջին տարիները, 70էն մինչև 80, Օֆէնպախի համար շատ տխուր և ցաւազին եղան : Վատառողջ, տկար, նիհար, ամեն տեղ ինքզինքը կը քայքայէր կաղզուրումն դտնելու համար, չրոց և բաղանեաց տեղէ մ'ուրիշ մ'անցնելով : Մագաղաթի պէս թափանցիկ էր, օգտտոսի մէջ մուշտակ կը հաղնէր, դանդաղ կերպով կը խօսէր, բայց արտաքոյ կարգի ոգւով մը, և արուեստի համար խիստ ազնուական և վեհմեծաճանաչ : Ինքն՝ հեղինակ դոյզն մեղեդեաց, ռամկական երգոյց, կը պաշտէր մեծամեծ վարժապետները, մանաւանդ զՄոզար և զՊիթովէն : Օր մը Ռոսսինի, թերևս հեգնական շողջորդութեամբ, իրեն ըսաւ. Դու Շան զէյլզէի Մուսարն ես. յիրաւի ճշմարտիւ պէտք չէ առնուլ այս բաղդատութիւնը, այլ Ոյրփէնսի հեղինակին ամենէն աւելի գեղեցիկ և մտադրութեամբ շինած բաներուն մէջ Մոզարական բան մը կայ :

Օֆէնպախ իրեն ամենէն վերջի տարիներուն մէջ այս մխիթարութիւնն ունեցաւ, որ տեսաւ նորէն զբարիքական ժողովուրդը բորբոքած իրեն աշխատասիրութեանց վրայ. յորոց վերջի երկուքը, Մատաւ Ֆալար և Լա Ֆիլլտիս դամպուր մաժօռ, մեծ յաջողութիւն մ'ունեցան, որ դեռ կը պահուի, և բոլոր մէկալ Եւրոպայի թատերաց մէջ հաստատուեցաւ ուր որ հանդիսացան : Լա Ֆիլլտիս դամպուր մաժօռը հարիւր անգամէն աւելի ներկայացուեցաւ, և ըստ բարիքական սովորութեան՝ կերուխումով հարիւրերորդական կանին հանդէսն ընելու ժամանակ, Օֆէնպախ յետագայ խօսքն ըսաւ. Կ'ըսեմ դամպուր մաժօռի հարիւրերորդականին համար և մի և նոյն ժամանակ իմ հարիւրերորդ խաղիս :

Թիւր ազդեցութիւն էր. խեղճ Օֆէնպախը առաջիկայ պիտի չըլլար մէկալ երկուքներուն հանդիսացմանը, հարիւրերորդին հետ միացնելու համար, որքեն Պէլ Լիւրեդ և Գունդ տ'Օֆման : Այս վերջինը սովորականներուն պէս փոքր գործ մը չէ, այլ ստոյգ կատակերական գործողութիւն մ'է, որուն մէջ Օֆէնպախ ուղեց ցուցնել թէ գիտէ գրել նաև ծանր երաժշտութիւն :

Աղէկ եղանակին խեղճ վարժապետը անցուց ի Ս. Ժէրմէն լա Հէյ : — Այն անդորրութեան մէջ, Օֆէնպախ վերջին ձեռքը կու տար իր երկու երկասիրութեանցը, մխիթարուած իրեն բարեկամներով և վաստակակիցներով, անցնելով անընդհանր և ջերմիտ գիշերներ, և ծաղրածելով իր առդուրս հասեալ վախճանին վրայ : Ով գիտէ, կ'ըսէր իր վալթ բարեկամին, Ի՛նչ տղէկ հատուա՞ն վրաս պիտի գրես երբոր մեռնիմ : Եւ յիրաւի վալթ իրեն վրայ գեղեցիկ հատուած մը գրեց : Օֆէնպախ մեռաւ յօղացաւորութենէ և աշխատութենէ, իրեն ընտանեաց գիրկը :